Չորրորդ տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Օգոստոսի 1-ին. Թիֆլիս. №31.

ԳՐԲՌՑԻ ՄՕՏ




Մահմեդ-Ալի շահը և սուլթան Աբդուլ-Համիդը



«Մանգլիսից մեզ գրում են, որ այնտեղ ամառանոց գնացած հայ քահանաները զբաղուած են շարունակ թղթախաղով և գայթակղութիւն են պատճառում ժողովրդին» («Հովիւ» № 26)

## Մ Ե Ր Կ Ե Ա Ն Ք Ը



—Ես քեզ ասում եմ, դուս կորի անհամը, չեմ ուզում հիմա տեսնիլ. մի դալի է, քսանուհինգ տարի ապրեցար. հերիք չէ… փիսա.

—Գօլուբուշկա ջան, ես քեզ հետի եմ մեռում. տեսնի պաշտում, փունց փուր

—Գրիշա, ты врешъ

—За тебя хочешъ утоплюсь ва такъ говоришъ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է երբ փակ չէ, եւ գտնւում է Պուշկինսկայա փ. № 1

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՑ. ԵՐԻՑԵԱՆ

## ՄԱՐԹԸ

Շատ հնուց, ով գիդի քանի հազար տարի առաջ, երբ վուր Աստուծը էս աշխարքը ստեղծել է՝ վերջն էլ փերք է արէ, փերք է արէ ու ասել է՝ էս թայգուլը ինչ լազաթ ունէ, կասէ, թէկի մէ թասուր բան էլ չեմ ստեղծի, վուր սրա լազաթը գիդենայ կասէ. իժում վեր է կալի մէ բուռը հող, ու փչել է, փչել է թէ չէ, ձիգ մատով, էնչախնեւեթ մարթ է դառել կացնի. սրան մեր ամենակալ Աստուծը Աթամ անում է ասի։

Էտ չախը, Աթամի վախտօքն իմ ասում մյ, չունքի աշխարքիս վրէն կաֆէ շանտան, ցիրկ, թէատր, կնգեբրանց կղզիլ, Ապօլօ ու Մուզա, պրօմէկատուր ու գաղէթնիր չէ էլի—Աթամը խիստ դարդուտ ու խանդուտ է էլի. մէմէ զամ էնենց պոխունդըրիք է գալիս էլի, էնթասուր իծանիր է պահելիս էլի, վուր Աստուծն էլ միզքանում է վրէն, ու վեր է կալնում Աթամին ջէր մէ բանդի թասուր բան է խմեցնում, իժում էլ ապերացիա է անում ու կուխկիցը մէ կնիկարմատ է դուս բերում։

Էտ կնգայ անումը դնում է Եւա. Աթամն ու Եւէն խիստ սիրով են ապրելիս ըլում էն չախը, վունց կօնցիատուր, վունց սատաչնուրթ, վունց գործակալ ու վունց էլ Սինօդ, սրանք չեն ըլում ճանչնալիս։

Պրիստաւ զարադովի հիգն էլ գուրձ չեն ունենում։

Սուգի կուռը խօ իսկի իրենց օրում գնացած չեն ըլում։

Զունքի, թէկի Աթամը ծեծելիս է ըլում իրա կնգան, Եւին՝ Եւէն էլ պակաս օյիններ չէ անելիս ըլում իրա մարթին՝ Աթամին. ամա էլ վունց կեբակուր էփել է գիդենում, հիմիկւայ կնգեբրանց թասուր, վունց էլ պաբիժակի ձօղանիր է սիրելիս ըլում։

Ասում են, վուր էն չախը խիստ լաւ կինք է ըլում. էժնութինը խօ արմանքի տօլ է էլի. ով գիդի լաւ ձմերուկը տասը մէ շայի է էլի էն ժամ. գր. իժում ինչ սեխ ու դթուննիր, քիշմիշի հազուց ու կամիսի թուզը կուլէր է։

Հալբաթտա էժան կուլէր ու զօռով չէին թանգցնի գնիրը, վունց վուր հիմի մեր կինտօէքը գիդին, տօրգովի պօլիցէն էլ խօ չէր թողնի վուր՝ խալխը, Աթամն ու Եւէն թանգ բանիր առնին—բաս հիմիկւայ թասուր խօ չէր ըլի, վուր վունց մէ բանի վրէն աչկ ու միտք չէին դարցնում ու էստ համա էլ խիարը ինչ է, խիարը, էն էլ խակ խակ խիարը, իրիքը մէ շայով ծախէին. էն չախը ասում են, խիար օչով չէր ուտում, կասէ, ասայ էշերումէն հիմի կի էտ ամենահարուստ կնիկացներու ուտելու բան է դառի։

Մտչ։

Էտ Եւի ու Աթամի ժուգը՝ պարանոյ ու շվէյկա էլ չէ էլի, ու էստ համա էլ սրանք անշուրիր են ման գալիս էլի։

Ասենք հիմի խօ պարանոյ ու շվէյկաներ կան, համա ինչի են մեր կնանիքը ակլուր վեր ու թեքերով. դօշ ու ծծերով դէկլօտէ թէ զահրումար, ման գալի. իս ու իմ Աստուծը, իս մինչկի հիմի էլ չեմ գիդի։

Ինչ էի ասում, հա՛մ էն էի ասում, թէ վունց Աստուծը մարթ ու կնիկ ստեղծից ու էնչախուան դէսը՝ մ ա ր թ ի ք են ստեղծւում։

Զակօնով ամեն էրկսանաու, ամեն էրկձեռանու, մէ գլխանու, էրկաչկանու, մէ քնթանու, էրկանգճանու մարթ ինք ասում, չունքի՝ Աստուծ վուր հուգին փչից, էտ փչածիցը մարթ դուս կացնից։

Ժամանակով, վունց վուր ամեն բան փոխուից, աշխարքիս ադաթնիրն էլ՝ մարթն էլ փոխից իրա խասիաթը. Աստուծ վուր ստեղծից մարթուն, իրա պատկերն էլ հիգը ուէից. համա հիմի էտենց է. ասի վուր ժամանակով շատ բանիր փախւեցան։

Հէր օխտածնիր, մենք էրեգւայ մեր տածնիրը, մեր արարքնիրը, մեր խօսքիրը, մեր գուրձիրը փոխում ինք, շիլափլաւ, աջաբսանդալ ինք շինում ու մարթը վուր մարթ է, վուր հազար տաս քան հազար տարի աշխարքիս վըրէն ապրել է, բաս նա չէր փոխի իր խասիաթն ու փաթրեթ՞ը։

Էս ինչի՛ ասի.

Էտ կի չէ՛ ու, ասում են միթա՛մ Եապոնիրը չայ շինող Զինացիներու հիգ գուգին կալի, կասէ։

Տօ, էտ Եապոնցինիրը ինչ գուէգասարատէրնիր են էլի, Հաջի Ամբարցում Աաբելովից են խասիաթը առի. թէ կնիազ Գիօրգի Ամիրաջիբից, փի՞է, բա չեն գիդո՞ւմ վուր կուժը ամեն օր ջուր չի բերի։

Փիս ու շատ ուտ պրիստաւի հանգի, Եապոնցիներն էլ օչավին հանգիստ չեն տալի. իս էտ թասուրներուն չեմ սիրում, իս ու իմ հոքին։

Նեմէցներու թաքաւուր Վիլհելմին էլ խօ ճանչնալիս կուլիք. սա էլ իրա նագիր-վեգիրին ճամփու է դրի, ջամաղիրն էլ՝ իրիք ամուանը չէ ասի, հիմի ուրիշ մարթ է գթի. ասում են վեգիրութինը նրան պիտի տայ, կասէ։

Ասում են, միթամ Մամէդ-Ալի շահն էլ չի ուզում դուս գայ, կասէ, իրա վուրթու հուղերեմէն. զակօնով էտենց էլ պիտի ըլի. մենք ինչ մեղաւուր ինք վուր հիմի նրան միզ մօղ, Թուսէթում գուգին տարեցնի։

Հօրը՝ վուրթին պիտի պահէ, դա հաթաքաւուրական, համ էլ Աստծու զակօնն է։

Ա՛յ, Սուլթան Աբդուլ-Համիդին է-

տենց չէն պահում. հիմիկւայ Սուլթան Մօհամէդը իսկի Համիդի հալալ ախպերն էլ չէ.

Մաշ։

Մարթկերանց մէջ մարթկութինը վուր վերացել է, էտէնց կուլի, բաս ինչ զահրումար կուլի։

Շատ մարթ միզանում էլ էտենց է. ամենքի հիդ քունում է՝ եապոնացիներու հանգի, փիքրիրը փոխում է, նեմէնցներու Վիլհելմի թուուր, աղու հացը, հօրն ու մօրը, ախպերութինը մօռանում է, վունց վուր Ղզլբաշի մինիստրները. տօ Մամէդ-Ալի շահը խիստ էլ փիսն է, շատ գէշ է, վունց վուր իս ինչ գիդիմ ով—համա քանց թէ ուրիշը պահէ, հազիր իրենք պահին։

Մինք, ուսեթեցիքս մեզաւուր ինք, վուր էստի գուզին նրան բերի, փիէ։

էստի Ցիմբիր Է։

Հիմի իմ վուրթիքը վուր տեհնին, թէ Ղզլբաշի նուր թաքաւուրը, իրա թաքաւուր հօրը դուս գցէց—էստի ինչ կու սովրին։

Հալբաթաա, մէ օր էլ ինձ դուս կոնին։

Ինձ վուր դուս անին, ձիզ էլ ձիր վուրթիքը դուս կօնին։

էստի էլ ինչ հէր ու վուրթութին, էստի էլ ինչ մարթկութին։

Ի՞նչ է մարթը։

Մարթը էս սահաթիս ամեն թաւուր բան է, համա մարթ չէ։ լ

Տօ, բաս վուր հիմի մարթիք ըլեք կու թողնի՞ք վուր...... Էհ մեք սափ տայ, թէ ձիր մամի ղանղրատօն կու սիրիք Է։

Տօ, թէ մարթը մարթ է, էս ինչ թաւուր բանիր է վուր սուտում ու անւում է։

Վայ մէ, վայ մէ, հիմի աս՛մ պիտիք բեղամաղ ըլի, չասիմ էլ՝ պիտիք սափ թէ՝ Գասպարը գիդի ու չի սուտում, համա վուր ասիմ, մէ հատ անգաճ պիտիք ունենայ, էրկու անգաճը լաւ չէ, ինչ լսում իք մէկով, մէկէլով դուս իք թողնում. ա՛յ թէ ինչի համա իմ սուտում, վուր մարթս էս սահաթիս սուտ մարթ ըլելուց, ամեն բան է։

Մաշ։

(Էլի կուլի)

Գասպար Կալասուզեանց

## ՀԱՅԵՂԲԱՅՐՆԵՐ

*(Մերեժկովսկուց)*

«Քրիստոս ի մէջ մեր» երգում են ժամում.
Բայց ես տխուր եմ. Լալում է հոգիս...
Եւ այդ ողջոյնը սուրբ սեղաններից
Անարգանօք է հնչում ականջիս։

Եթէ Նա մեր մէջ լինէր և տեսնէր,
Թէ ո՛ւր է հասել զարս այս—փառաւոր,
Թէ ինչպէս մարդը խայտառակուած է,
Ինչպէս եղբայրը ատում է եղբօր...

Եթէ Նա այստեղ—այս սուրբ տաճարում
«Քրիստոս ի մէջ մեր» ողջոյնը լսէր,—
Որպիսի՜ այրող արտասուքներով
Ամբոխի առաջ պէտք է հառաչէր...

Փոխ. Լիլիպուտի

## ՊՍՏԻԿ ՖԵԼԻԵՏՕՆ

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ «ՈՐՏԵՂ ՀԱՑ, ԱՅՆՏԵՂ ԿԱՑ»։

Տրագի-կօմեդիա երկու գործողութեամբ.

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Ժողովուրդ.—Անունը կայ, ամանումը չկայ», ամեն բան և ոչինչ, ակլոր ու քաղցած. ամենքին լաղ, ամեն քամու յետևից վազող։

2. Միապետ (Շահ, կամ Սուլթան). Ծօքին շատ հաստատ. օրական միայն երեք անգամ է երդմանը դաւաճանում. Բերանից մեղր է կաթում, ձեռքից արիւն։

3. Հայը.—Մի թիւրիմացութիւն աշխարհիս երեսին. մի մարդ, որ ստեղծւած է կոտորւելու համար։

### ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Ժողովուրդը.—Կեցցէ ազատութիւնը, հաւասարութիւն, եղբայրութիւն, կորչի բռնապետութիւնը, կորչին կեղեքիչները, բանտերը, մտրակները. հարկերը, բաւական է որքան դուք փլաւ կերաք, մենք թան, դուք շալ հագաք՝ մենք փալան, դուք ձի նստեցիք՝ մենք ջորի. կեցցէ հաւասարութիւն.

Միապետը.—...Եա... եա... տալիս եմ ձեզ ազատութիւն... սահմանադրութիւն... փլաւ... քիշմիշ... եա... եա... միշտ ցանկացել եմ ազատութիւն տալ, բայց անիծւած վատ եղանակները... կարկուտը, անձրևը միշտ խանգարում էին իրագործելը. ահա երդւում եմ ղուրանով, միրուքով, կարմիր շալւարով, գեղին մաշիկով, որ հաստատ Ցնում եմ երդմանս, քանի այս մաշիկը ոտքերիս է...

Ժողովուրդը.—Կեցցէ ազատասէր միապետը, կեցցէ ազատութիւնը, կեցցէ... (սկսում է պարել և խնդալ)։

Հայը.—Ի՞նչ ասեմ. կեցցէ ասեմ, վայ է, կորչի ասեմ, վայ է. արի, ջհաննամը ես էլ հուրիյեաթ բղաւեմ.—Հուրիյեաթ կեցցէ ազատութիւնը... (խառնւում է. ժողովուրդի հետ)

### ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Սուլթանը.—Հա՛յ հէ՛յ, ինչ ոսկիներ են, հուրիյեաթ չէ, հուրիներ են, (զնգզնգացնում է գրպանում) ջա՜ն, ջա՜ն, ուէք ինձ այս ոսկիները, և միայն ասէք—ում ուզէք կկոտորեմ սախի նման թէկուզ ինքս ինձ—վա՜յ, այս ինչ ասացի. (մօտենում է ժողովրդին). Էյ, մուսուլմաններ, Էյ ձեզ եմ ասում. ինչ էք սուս կացել. աչքներդ բացէք. չգիտէք որ անիծած գեաւուր հայերը բերել են ուել Եւրոպայից, ֆրանգներից, մի մաշինա, որի անունն է կօնստիտուցիա և այդ մաշինով պիտի կոտորեն բոլոր մուսուլմաններին. Էյ, ժողովուրդ, զարթիր, յիշիր շարիաթը, բղաւիր «մահ հայերին և շարիաթ»։

Ժողովուրդ.—Մահ հայերին, գեաւուրներին, կեցցէ շարիաթը...

Հայը.—Հը՛մ, շարիաթը... Գլխիս շառ գալու. (ջոկւում է ժողովրդից և դէպի տուն վազում)

Սուլթանը.—Կոտորեցէք. (սկսւում է կոտորածը)։

Ծերունի հայը.—(Դուրս է գալիս արնաթաթախ). Այ քեզ հուրիյեաթ. ա՛յ քեզ հաւասարութիւն. եկէք, եկէք, ինձ էլ սպանեցէք, ձեր հուրիյեաթին նահլաթ. հասան քաչալ, քաչալ հասան... ձեր երեկն էլ անիծեմ, ձեր այսօրն էլ... չմոռանամ քանի միտս է գրեմ. (հանում է ծոցատետրը և գրում.) «սահմանադրութիւն... կօնստիտուցիա... հայերէն նշանակում է կոտորած»։ (Տակը երեք անգամ գծում է։)

(Վարագոյր)

Դիօնիս

## ԼԱՒ ՏԵՂ

—Ո՞ւր ես գնում.

—Ջհանդամը։

—Վա՛յ, ինչո՞ւ, ափսոս. բայց որտեղից.

—Բալախանից։

—Հա՛, փառք չունի, էլի սրանից լաւ տեղ ես գնում։





—Օ՜, բարո՜վ, բարո՜վ, պարոն Կարապետ. վո՛ւնց ես, վո՛ւրդ, ես, քեփդ, հալդ։

—Ա՜յ Աստու բարին գլխիս անպակաս, Հէքիմփետ ջան. սաղ ըլես, կամ էլի. դու վո՛ւնց ես. սաղ, սալամաթ...

—Փառք Աստու, վայնաչարի եօլա եմ գնում—մէ սաս գեթադուայ դուն մինչկի հիմի ո՛ւր էիր։

—Գնացել էի Էրուսաղիմ։

—Վա՜, դո՛ւրթ ես ասում, իմում ինչ կար էնդի. հաջիդ խիթթարուի ու լուսը քու աչկերին։

—Լուսը քու ծնուղաց, համա Էրուսաղիմն էլ մէ բան չէ էլի, էնդանցի միաբաննիրը դիփ էլ Թոկի խարջ են. դուն պարոն Հէքիմփետ, վո՛ւրդ էս էլի։

—Է՜, էլ մի հարցնի, գնացել էի Էջմիածին, ուզում էի հոգուս համա մէ քիչ ազատակ անի, էս ութ ամիս էնդի պաղնազուր էի։

—Իմում ինչ կայ, վո՛ւնց են մեր վանքիրը։

—Վո՛ւնց պիտի ըլի, գեթադուայ, Տէրը ազատէ ամեն հայ քրիստոնին, չոլախ քոխւեմէն, կրոած տէրտէրներեմէն, փակւած վարթապետներեմէն, ագէտ վարժապետներեմէն, հաստափոր հոքաբարձուներեմէն, սուտ ցօցիալներեմէն, ցանցառ պիտատորներեմէն, աղաճ գզիրեմէն, ուսաղակ դատաւորեմէն, պրիստաւի մաթրախեմէն, պարտկատիրուչ բորաթներեմէն, միկիտնի տկճուրեմէն, ծուռբել ատւոկատներեմէն, դուքանչու գաւթրեմէն, հոքեհան դոխտուրներեմէն, ախտեանս ուրիշներից ամէն։

—Վա՜, դո՛ւրթ ես հրամանք անո՜ւմ։

—Էն սուէք կերէքը գիդենայ։

Ե՞ Ր Բ

Գիտեմ բոլոր դու տեսնում ես.
Դու կը իջնես մի օր ցած.
«Դու ուշ կանես, պուպուշ կանես»
Դատաստանդ ո՜վ Աստուած...

Տատէլ-Արաբ

# ԹԽԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Գաղէթանի Աղայ

Ջիմ գիտեր կուտնա՛ս, թէ օր բախմ, ես ալ կլուպի չլէն իմ գասիր. ադանկրուն որուն իմ խառնուիր։ Ինչ էնիմ, աղբար, վարուուրդ կենիմ, օր ինձնէն բեթարները կլուպի չլէն ին գաւիր, Ծօ, ես յո՛ւմ ադջկանէն իմ պակաս։ Ճասս ալ դալայչի, դարաչուխալի, յուսում ալ չունիմ. որանքէն ալ վայնաչարի մայեա տայեա չաթուփաթ կենիմ. ջանմ, կլուպի չլէնին հեչ յուսում պէտք չէ. սալթ քանիմ խօսք օր բերան էնիս, հերիք է։ Օրինակի խաթեր համար. թէ բիլիարթի կլասը մտար, անդիր պիտի էնիս. «Պի. մել. շար. ուզըլ. սրեղին. ղութլէմ. նա պրափս, նա լեւա...»։ Թէ կարթի կլասը մտար. պիտի գիտենաս. ճանմալիկ, բեմիզ, կոխլ, պուլկայ. պոիկուպկուպիկ, բազ...։ Թէ կարթլու կլասը մտար՝ սալթ գաղէթներուն անունը գիտենաս հերիք է։ Ես թէ չէ, որանքէն գաղէթմ առ, աթոռին եսնե սրի, ու քեզի համար սալթ պակըներդ ժամ տուր. վե՞ պիտի պաւերկայ էնէ, թէ կարդաս կը, թէ յուրիշներուն աւսցնիս կը։ Հմը մուղաթ կեցի, գաղէթը թարս չը բռնիս, թէ չէ վարուուրդ կենին կը, խայտառակ գլլիս կը։ Աս քան յուսումը ես չարաթւանմ մէջ սորւայ. ալ մնացած բաները վե՞ է հարցնողը։ Սարախոսան տէյմօր յիրիկուն խանթիս մէջը, մրի ու ժանգի մէջ լող կուտամ կը. ձեռներս դաւի ծունկէ գասիր. քիթ ու բերանս մրի մէջ կորիր է. այլակերպ իմ գասիր. սֆաթս ղըլղըլս տեսնողը խրտնի կը։

Հմը յիրիկուն գլլիկը թէ չէ, խանութըս կողպիմ կը, հաւարով տուն վազիմ կը, երես մերեսս լաւ խոտակ լւանամ կը, չորերըս փոխիմ կը, փանթուլ տաւժուրկայ հագնիմ կը. դօշս ալ կասխմայի շապիկը պլըլակը. սապօկներս ալ ձեռովս վաքսիմ կը, պայկամ ձեռըս կառնիմ կը ու շորորալով եավաշ կլուպ կերթամ կը։ Հեռուից տեսնողը, ինձի խանթիս մէջ չը տեսնողը, գիտէ թէ լօշի մէջ հալւայ կայ։

Ներս մտնիմ կը կլուպը թէ չէ, չեւցարները վազին կը, վերը պալկաս կառնի կը, վերը պալտօս հանէ կը, արթըդ ես ալ մըրթաւուզի պէս անպէս կուռիմ կը, օր քիչ կը մնայ կլուպի մէջ սրտաքիմ։ Մտնիմ կը զալը, բիթուներին բարեւ կուտամ. ձեռ բերա բռնիմ կը։ Աս բիթուն լաւ. ինայ խաղալըքանն պիտի խաղամ, թէ չէ ատւրայ տատամի պէս էրթաս քեօշան նստիս, վրադ մասխարայ ցկին կը, գեօրմամիշ կըսինկը, ատամաղաբշմաղ կանչին կը։ Հէչ բան օր չգլլի, նարդի պիտի խաղամ, առիկ դօլայ խաղ է, հմը ինչ կենիս, աս վախթն ալ նարդըճիները չորս թարաֆէն թափին կը վրադ, լագաթ չին տայ. յամենքը մէ թարաֆէն ճւան կը, «Ծօ, չաշը դարկ. ծօ, դորդչհարը յառաջ քշէ. ծօ, դարկ ու փախիր. ծօ շաշ ասին սա...»։ Ինչքիմ ինի, (անունը մոէս յէլաւ) դալիզանլին օր չի գայ կողքս մտնի կը, ան սահաթին կըւիմ կը։ Հմը գաղէթանի աղա ջան, ես ալ շատ ասպէս վէնծ մարդ դառայ։ Տեսնես կը, ես ինձի ալ դալայիմ կը։

Ղալայչի Մարգար

## ՆԱՄԱԿ ԸՋԾՆԲԱԿԻՑ

Բաւոր Դատպար,

Ըզգար վախտ նամակ չի գրըմ, խնդրըմ եմ ներողնաս ոչ, կ'ըսի թէ մոռծես, թէ սանահէրս մոռացել ա, չէ Աստօծ վկայ, ես իմ փորին մաջալ չունէի։ Դու կիմանաս էլի, թէ մեր ինչ վախտն ա, կալ ու կաի հետ ենք, յիքքին ենք խչմարըմ, անջաղ պրծանք։

Բաւորիս ասեմ, էս յուլիսի 13-ին քչերով դուս էկայ ուսոցը, տեհայ, Դափրէլենց պատին մի թուղթ ա կպցրած, ժողովուրդն էլ թափ ա էլել կարդում ա։ Մօտ գնացի կարդացի, տեհայ, գրած ա, որ յամէն մատաղարաժին սանից մի մարդ գայ չկօլը, ժողով ա։

Ասեցի, ջհանդամ, էթամ տեսնեմ ինչ են խօսում ժողովըմը։ Գնացի տեհայ աշագին բաղմութին ա թափ էլել։ Բոմմէքս էլ գնացինք ներսե նստոտեցինք։ Դօրծակալը վե կացաւ ասեց.

—Սիրելի ժողովուրդ, ես կօնսիստօրից թուղթ եմ ստացել, որ դամ Աշտարակ թաղա փաքարարձուներ ջոկենք, չկօլի համար։

—Ժողովուրդը ասեց, տէրտր հերու ջոկեցինք, չէ՞ որ իրեք տարենը մի հետ են ջոկըմ, բա էս խի՞ ա բռնեց։

—Ինց որ քոմմէքից էլ այսն ա՝ հերւայ ջոկածներիցը, որն ապանեց, որը դուս էկաւ, մնացածին էլ կօնսիստօրն ա դուս արել, պտի թազա ջոկենք։

Ռազի կացան։

Նախագահ դրին Թումանենց վարժապետ Նիկողոսին, քարտուղար Թամազեանցին։ Ժողովը սկսեց։ Բաւոր ջան, որ էն սպանւածներն ու խօլերից փախածները սաեղ ըլէին՝ կը զարմանային։ Ըսկի, սաս սանց իրաւունքի մինը խօսըմ էր, ես ձէն ու ծպտուն դուս էր գալի։ Ղափիլ որ ըսենց տեհա ոչ՝ ես հենց յիմացայ Պետրեպօլը եմ, ընէլ Դումի ժողովամը. խօսողները քոմմա էլ լաւ-լաւ խրատներ են տալի ժողովուրդին, թէ ըսենց մարդիկ ջոկեցէք, որ թայֆայական չընեն, համ էլ չկօլի համար ջան ցաւացնեն։

Ես մնացել ի մոլորած, որ աշտարակցիք իրար հետ ըսենց քաղցր-քաղցր խօսում են, ընէլ ըզգար խալխը թափ էլած մի տեղ։

Գիդամ ոչ, իմ աչքը դիպաւ, թէ ինչ ստատնի քամի ներսե ընկաւ, մարմանդ ծովը ալեկոծւեց։ Մինը մի բան ասեց, մի ուրիշը սաանց իրաւունքի դրան պատասխանեց։ Սա նրան, նա սրան, էլ նախագա

ու քարտուղար չի հարցրին, քանի էլ գոգնոցը գրին, իրար ուշունց ուին։ Էլ ինչ ասեմ, էս գեղցի Պետրոսյանը գումէն զատած ըլլեն Աշտարակու ժողովներեցը։ Դուս թափեցին, էն էր հա, քիչ էր մնում մարդ փռւէր։ Լաւ էր հարեւանգցերին, տարան նեղսի ու անձաո, անխօսալ՝ մի ջուրայ բալա-բարեւ արին, հինգ փողաբարձու հնդրեցին. Էրկու կռնդխաար։

Ձէ քուր ջան, որ գրուա խօսանք, մեր գեղըցիք էտ թասուր բաների հետ գլուխ չունեն։ Սրանց ընչքն ա պէտքը ուսուցնարանը, Պերճեան գրադարանը, որ քանի թաղա-թաղա էր, փող թափ արին, ուզում են բաց անեն Պերճի խաթեր, հենց որ հընացու՝ թարգը ուեն։

Մի աղաեքք կար, ընդար պղդահարեցին, խաղէյենը վերջացրուց։ Դրքի դուքանի գլուխն էլ էտ օրնը հանեցին։

Էտ աղաերքի տեղը պիւնոյ են բաց անել, գրքի դուքանի տեղն էլ ուզում են միկիտան բաց անեն.

Քո սանահէր

Ծարաւթ.

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Տեղիս Կորինաքաղաքի բնակիչների մի մասը իրենց կովերի, հաւերի, և այլ ընտանի կենդանիների հետ միասին երեք ամիս անջուր Թալով՝ ուշաթափուեցին։

Խեղճերի այդ դրութեան համենալու յանցանքը ընկնում է մեր հասարակաբար այգեատէրերի շնքրին, որոնք բաւական չէ որ իրենց այգիները աաշտօրէն ջրում են Գանջա գետի ջրից. Մնացած աւելորդ ջուրը փոխանակ կորինաքաղաքացոց տալու, որ գոնէ նրանց հաւերը ծարաւութիւնից չը կոտորուեն, ընդհակառակը «Насосъ-ով» կաշում են անում ու լցնում իրենց փոսերը, որ գինու թանգութեան պատճառով Թացել էր դատարկ։

Ուշաթափուելուց առաջ Թացած կորինաքաղաքացիները տեսնելով, որ անջուր Թալով, իրենք էլ դրացիների օրը պէտք է ընկնեն, վերցրին բահերը և բրիչները և պատեցին ջրով լիքը մի քանի այգիատէրերի հորերը—և գինու կարասները։ Բացի այդ, այսօր մի խումբ կորինաքաղաքացի այրի ագրաա կանայք, իրենց չփակած երեխաների ձեռքերից բռնած թափեցին Կոմիտէիս գրասենեակի առաջը և խնդրում են ինձ, առ սուրս ձեր արկանել իրենց հետեւեալ բողոքը։

«Այս ջան։ Բողաքի կենտրօնում եղած ագրիբներից խմելու ջուր բերելու համար, մենք առաւօտեան ժամը 3-ին Կորինաքաղաքից բարեկ ասնելով դուրս ենք գալիս և հազիւ ենք վերադառնում միւս օրը ժամը 5-ին։ Եւ այդ այն ժամանակամիջոցն է, որ մենք օրական 30 կ. «արմո» ենք քաշում և մեր երեխաներին սոված լինելուց ազատում։

Ինչ խորհուրդ ես տալիս մեզ։ Թողնենք մեր երեխաները սովից մեռնեն, թէ ծարաւութիւնից, եթէ ջրի ենք գնում՝ մշակութիւնից ենք զրկւում և մեր երեխաները սոված... իսկ եթէ մշակութեան՝ երեխաները ծարաւութիւնից...

Այդ մասին մենք ամբողջ երկու տարի աղերսել ենք, երկնքի թէ աշխարհական և թէ կրօնական դատաւորներին։ Աշխարհականները միշտ պատասխանում են՝ թէ մեր օրինագրքերի յօդուածներում, ոչ Կորինաքաղաքի մասին կայ գրած, ոչ ծարաւութեան և ոչ էլ սովածութեան։ Իսկ կրօնականները պատասխանում են՝ թէ մեր օրինագրքում գրած է» ոչ միայն հացիւ և ջրիւ կեցցեն մարդիկ, այլ ծարաւութեամբ և սովածութեամբ...

Հիմայ մեր յոյսը Թացել ես դու և քո «Խաթաբալան»։ Ասում են, թէ ձեզ շատ օրէնքներ ունիք, մանաւանդ շքիներ...

Շքիների համար ուղարկում ենք 1, մեր պատկերները 2, մեր այրուած պարտէզների պատուղները 3, ծարաւութիւնից սատկած մեր հաւերի կովերի, և կատուների լէշերը։

Իսկ 4—ը այս ամենի պատճառ, փորերը ու վզերը հաստ աղաներինը...

Վերջիններիս երեսներին ոչ ծաղկի նշաններ կան և ոչ «ինլեարաաի» և ոչ արուա հայա, սիրունութիւնից շափաղ շափաղ են անում։

Ազա չիմանաս, թէ մենք զարափաթ ենք անում ու Գանջանէլ աշխարհագրական գիրքով զանուում է Ափրիկայումը և գանձակեցիներըն էլ «զուլուսներ» են, ընդհակառակը. Գանջան Կովկասումն է և գանջեցիներն էլ հաշւում են Կովկասի միւս ցեղերից «կուլտուրականա» բարձր աարերի թւին։

Վասն անգրագիտութեան բոլորի տեղ
ձեռք գրի Հուռի աղբր։
Տղայքութեան համար արտագրեց
Մոծակ



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԵՒՐԱՍՏԵՆԻԿԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Զզւում ուրիշներին ինչպէս, բայց ինձ դժբաղդութիւնը միշտ այցելում է ոչ միայնակ։

Երկու օրում երեք դժբաղդութեան հանդիպեցի։

Սեաստօպոլից գնում էի Մոսկւա։ III կարգի կուպէներից մէկի անկիւնում կուչ էի եկել։ Տեղ չկար նստելու, ես Թացել էի կանգնած։ Ուզում էի ինձ հաւատացնել, որ նստելու ոչ մի հնարաւորութիւն չկայ, ուստի և Թացել եմ կանգնած։ Ինչքն պէտք է մարդկանց անհանգստութիւն պատճառել,—իմ մէջ ակամայ խօսում էր մարդասիրութեան զգացմունքը։ Իսկ երբ այս կամ այն անկիւնում փոքրիկ տեղ էր բացւում, ուր նստել, ի հարկէ, չէր կարելի, բայց եթէ խնդրէի հարեւաններիս կը բացէր տեղ և ինձ համար, ես շտապում էի հեռու վանել այդ մտադրութիւնը և յաղթող տալ իմ մարդասիրութեանս։

Կանգնած Թացի մօտ մի ժամ, գուցէ և աւելի։ Շրջակայ տեսարանների դիտելն էլ ձանձրացրել էր ինձ, ինչպէս և լրագրների ընթերցումը, այնպէս որ այլեւս ոչ մի զբաղմունք չէր Թացել՝ որով մոռացնէի իմ յոգնածութեան զգացողութիւնը։

Վերջապէս, մի գիւղացի, երեւի կարեկցութիւնից դրդուած, մի փոքր սեղմելով տեղ բաց արեց ինձ համար։

—Նստէք, պարոն, յոգնած կը լինէք,—ասաց նա մեղմ կերպով ժպտալով, երեւի զարմանում էր իմ համբերութեան վրայ։

—Ոչինչ, կանգնած էլ կարող եմ Թանեցութիւն մի կրէք,—համ ասացի, համ նստեցի։

Նոր միայն զգացի, որ ատնջել եմ ինձ. ոտքերս ցաւից կրակծում էին մեղմիւ։

Զնայած դրան, ես ուշախ տրամադրութեան մէջ էի։ Թաղադութեամբ վերջացու նստելու հարցը,—մտածում էի ես,—Թացց քնելու խնդիրը։ Ա՞հ, եթէ այն էլ վերջանայ հաջողութեամբ և հանգստութեամբ։

Ժամերը սահում էին միմեանց յետեից։ Մութը վաղուց էր ընկել։ Ընտիր հարեւաններս մէկ մէկ սկսեցին գրաւել իրենց քնելու տեղերը։ Խաղացի ժուցիկան հետրզհեաէ ուժեղանում էր։ Ես նստել էի մի երջանիկ խոմփացնողի մօտ։

Բոլորը քնեցին։ Ես Թացի մենակ՝ խոհերիս և Աստծոյ հետ։ Ես վեր կացայ և աչք ածեցի շուրջս։ Ցանկարծ նկատեցի քնելու մի ազատ տեղ։ Մի երջանիկ խռմփացնող պառկած էր հանգիստ։ Քնելուց առաջ նա կախել էր իր ամառային վերարկուն, գլխարկը և այլն այն փակ դարակի վրայից որ քնելու համար է նշանակւած։ Այնպէս որ դարակը քնելու համար յարմարեցնելիս, պէտք պիտի լինէր վերցնել վերարկուն, գլխարկը և այլն։ Բայց դա դեռ փոքրագոյն դժբաղդութիւնն էր։ Կար մեծագոյնը։ Դարակը բարձրացնելու համար պէտք էր զարթեցնել երջանիկ խոմփացնողին, որովհետեւ նա իր ամբողջ մէջքով յենւած էր փակ դարակին։

Ես կանգնել էի երջանիկ խոմփացնողի առաջ և տատանւում էի. զարթեցնե՞լ թէ չզարթեցնել։ Վերջապէս, որոշեցի զարթեցնել։ Ես մտքումս որոնում էի այնպիսի դարձւածներ գործ ածել, որ երջանիկ խռմփացնողի համար վիրաւորիչ չլինի։ Ես սկսեցի ձայն տալ նրան զարթնելու։ Բայց իզո՜ւր։ Նա քնած էր մեռելի պէս։ Ես ստիպւած էի մկանային ույժ գործադրել։

# Ս Է Ր

*(Ռուսերէնից)*

Թւում էր ինձ, թէ ես տեսնում եմ իմ կեանքի բոլոր ժամերը, որոնք հանդարտ թռչում էին իմ աչքի առջև, ինչպէս ձըկնկուլների երամը սատափեայ շղթին, արևի մայր մտնելու ժամանակ։

Իմ կեանքի բոլոր ժամերի թևերը, առաջ սպիտակ, թաթախուած էին արիւնով, իմ սեփական արիւնով. կեանքիս միայն վերջին ժամեայ թևերը, սպիտակ ու անապակ էին։

Ե՞ս, ես մտածեցի. գոնէ գեղեցիկ ու հանգիստ կլինի իմ մահը…

Այդ պահուն երևաց նա, այն կինը, որին ես սիրում եմ. տեսնելով որ բոլոր այն ժամերը, որոնք ձգում են ինձ ապրելու, ներկուած են արիւնով և միայն վերջին ժամն է սպիտակ ու անապակ—ասաց

—Ուզում եմ, որ այս ժամն էլ լինի այնպէս, ինչպէս բոլորը։

Ես չհարցրի թէ ինչու։

Յետոյ նա հարցրեց.

—Բայց որտեղից արիւն վերցնենք

Ես ցոյց տւի նրան իմ սիրտը և խնջարը տալով, ասացի

—Խփիր։

Երբ նա բազուկը բարձրացրեց խփելու, ես միայն մի բան էի մտածում. կարօղ եմ արդեօք պահել իմ ճիչը, որ նա չվախենայ, իսկ երբ նա խփեց, իրաւ ես չճչացի, թէպէտ ցաւը սաստիկ էր։

Արիւնը դուրս ցայտելով իմ սրտից՝ ներկեց կեանքիս վերջին ժամեայ սպիտակ ու անապակ թևերը։ Ես մտածեցի, նոյն իսկ մահս տխուր ու տարտամելի է լինելու, բայց չհարցրի, թէ այդ կինը ինչու այդպէս վարւեց։

Նա այդպէս ուզեց—իսկ ես սիրում եմ նրան։

*Գէորգ Ծովեանեան*



—Վա՛յ, Հասմի մաիկ, Դարչօ, ո՞րդի էիր տօ, մի տարի ա չես էրեւում։

—Ես գիդա՞մ, կլուբումը կլէի ա՛յ, որդի պտի բլէի. աշունքւանից դաչա ի գնացէ

—Ընչի՞ տօ, գիժ խօ չէիր։

—Գիժ ընչի կլէի, գժէրիցն էի փախչում, տեհայ որ քախկում էլ ապրիլ չի բլում, ընդուր որ ամեն մի անասլխատ, ամխատի վրէն ա խօսում, հարփան յօթին գինու փառութենի վրէն, գողը գողութենի վրէն, մարթապաննը մարթապաննութենի, անմարիփաթը մարիփաթի, տիրացուն ցօցխալութենի, տէրտէրը մուրթա ստողների, ցօցխալը մարթախափութենի, գոխտուրը փողի համ հաքի ա տալի. ատւակատը գործը ձգձգում ա ինչ ա, փող շատ գլփի, գրողը ուրըշի գրածներիցն ա գողնում, տխմախը գրքեր մաղանում, ու էս դայցի բաներ. էլ ո՞նց էի մնացէ։ Փախայ ձմեռւայ դաչայ։

—Ըժում, էլ ինչ հմի էկար, էս շոք պեպելակին։

—Ընչի էկա՛յ, ընդուր որ, էս ծուտրեներով դաչէքը լցւեցին, ու համ էլ իմացայ գրանք որ սաղ էն բլէ քախկից, քախկումը գիժ չու խալխ են մնացէ։

## Բ Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## ԿՆՈՋ ԾԱԳՈՒՄԸ

*(Կաբարդինական լեգենդա)*

Աշխարհի ստեղծագործութիւնից դեռ շատ ու շատ դարեր առաջ, գոյութիւն ունէին չարն ու բարին։ Ալլահի մէջ ապրում էր բարու ոգին, իսկ սատանաների գըլխաւոր Իբլիսի մէջ—չարի խաւար ոյժը։

Երբ Ալլահը ստեղծեց մեր ամբողջ տեսանելի աշխարհը, կենդանիներին, թռչուններին ու ծառերին, իր աշխատանքի վերջին օրը նա ստեղծեց ադամարդուն, նա տւեց նրան խօսելու ընդունակութիւն, խելք և կամք, որին հպատակեցրեց և՛ թռչուններին, և՛ գազաններին, և հողն ու ջուրը։

Տեսնելով այդ, չար Իբլիսը սկսեց ծաղրել Ալլահի ստեղծագործութիւնը։

---

Բայց այնքան փափուկ և աննշան էր այն, որ ներգործութիւն չունեցաւ։ Մերթ ընդ մերթ փորձ էի անում վերցնել վերարկուն, գլխարկը և այլն և մի կերպ բարձրացնել դարակը անցքալի կեդրոնի։ Բայց եթէ յանկարծ երջանիկ խամփացնողը զարթնէր և սկսէր կըքոտ վէճ։ Առանց այլևայլութեան ես նրա խօսքերին պիտի պատասխանէի ամենակըքոտ ձևով։ Եւ այնուհետև ճառ քարով պիտի առէի քննելու հարաբերութեանը։ Ես չեմ կարող քնել յաղթած սրտամաշութեամբ, ուստի և խուսափում եմ վէճերից։

Այդ էր պատճառը, որ ես ընկել էի երկու սարսափ անճարակութեան ծուղակի մէջ։ Ձեռքս մտցնում էի վերարկուիս և հեռացնում. կարծէք թէ գողութիւն անելիս լինէի գիշերային ժամին։ Ես մտադրեցի մկանային հուժկու ոյժ գործադրել զարթեցնելու համար, միաժամանակ մաքուում որոշեցի մի շատ շոյիչ նախադասութիւն՝ երջանիկ խամփացնողին դիմաւորելու համար։

Զգուշօրէն զարկեցի պարոնի թևին։ Նա աչքերը դանդաղօրէն բաց արեց, իսկ ես արտասանել սկսեցի մաքուրս հազար անգամ կրկնած բառերի շարքը։

—Ներողութիւն, պարոն, որ ձեզ անհանգստութիւն եմ պատճառում…

—Ի՞նչ կայ, ինչ էք ուզում,—դարձաւ ինձ վրայ երախտապարտ պարոնը կոպտութեամբ. դուցէ և ոչ կոպտութեամբ, բայց ինձ այնպէս թւաց։

Վէճի ու կռւի տեղիք չտալու համար, ես ձևացրի, որպէս թէ չլսեցի ինձ վրայ նրա գոռոցը։

—Պարոն, կարելի՞ է օգտւել այս քնելու պատ տեղից, ասացի ես մեղմ ու քնքուշ ձայնով։

—Ամենևին չի կարելի, գնացէք քնելու այնտեղ, որտեղ դրւած են ձեր իրերը,—պատասխանեց երախտապարտը էլ աւելի գըռգռած։

—Բայց ոչ մի տեղ չկայ…

—Խօսելու ժամանակ չունիմ, հեռացէք։ Դուք երևի ծանօթ չէք այն կանոններին, որ գործադրւում են այստեղ։

—Ես կարդացի ինքս ինձ։

—Դուք խօ ապուշ չէ՞ք, պարոն, ես ձեզ ասում եմ, որ տեղ չունեմ քնելու, ուրեմն և չեմ կարող քնել այնտեղ, ուր դրւած են իմ իրերը, բոլոր տեղերը բռնւած են։ Մայլ լինելով, դուք սատկում էք տեղից վեր կենալ…

Նա յանկարծ երեսը շուռ տւեց ինձանից, ասելով.

—Լիրբ։

Ես պատասխանեցի աւելի ծանր խօսքերով և հեռացայ ու նստեցի իմ նախկին տեղը—երջանիկ խամփացնողներից մէկի ոտքերի մօտ։

Իմ ամբողջ ներքին աշխարհը տակն ու վրայ էր եղել։ Ես կրծատում էի շրթունքներս ներքին յուզմունքից մղւած։ Մի կաղ օրիորդ, որ լսել էր մեր վէճը՝ եկաւ մօտեցաւ ինձ և առաջարկեց իր տեղը, պատճառաբանելով որ շուտով պիտի իջնի մօտակայ կայարաններից մէկում։ Ես մերժեցի, հաւատացնելով որ քնել չեմ կարող այլևս։ Ես կարծում էի, թէ հակառակորդս նոյնպէս չպիտի կարողանայ քնել. բայց զարմանքով լսեցի նրա խռմփոցն աւելի ուժգին, քան առաջ էր։

Երջանիկ մարդ,—մտածում էի ես,—ինչ էլ որ լինես, ես յարգում եմ քեզ, քո սառնասրտութեան համար։

Լուսացաւ։

Իմ դժբաղդութեան իրիկունը վերջացաւ։

Միւս երկու դժբաղդութիւնը ես տրամադիր չեմ գրի առնելու։

*Երամեան*

—Այսքան երկար ժամանակ չարչարեցիր դու,—ասաց նա Ալլահին,—բայց չը կարողացար մի կատարեալ էակ ստեղծել։ Ահա, նայիր, հրճուիր քո ստեղծած տղամարդու վրայ. նա տգեղ է, երեսը մազերով ծածկուած, դէմքը կոպիտ, կաշին կոշտ, իսկ նրա շարժումների մէջ, ոչ գեղեցկութիւն կայ և ոչ էլ նրբութիւն, էլ ինչ կատարեալ արարած է դա, ինչ ստեղծագործութեան թագ ու պսակ։ Ա՜յ կը տեսնես թէ ինչպիսի արարած կը ստեղծեմ ես։

Այսպիսի խօսքերով պարծենում էր Իբլիսը, իսկ Ալլահը լուռ լսում էր նրան և մտքի մէջ մտածում. «Տեսնենք թէ ինչպէս պէտք է եօլա գնաս առանց իմ օգնութեան»։

Եւ Իբլիսը ձեռնարկեց մի արարած ստեղծելու, որը աւելի բարձր պէտք է կանգնած լինէր, քան թէ տղամարդը։

Ալլահի նման՝ նա էլ վերցրեց ցեխի մի գունդ և նրանից մի չքնաղ արձան պատրաստեց։ Սև մազերի երկար չքնաղ հիւսերը, թափուած էին նրա սպիտակ մարմարեայ ուսերի վրայ, ճակատի վրայ ոլորւած, սև օձերի պէս ձգւած էին կամար յօնքերը և թաւշեայ թերթևունքների տակից փայլում էին զոյգ կրակոտ աչքերը։ Կարմիր վարդերի պէս վառւում էին նրա թարմ այտերը, իրանց չքնաղ աննման փոսիկներով, իսկ մարմարեայ շրթունքների յետևից, երևում էին նրա սպիտակ, ձիւնափայլ ատամները։ Նրա ամբողջ ճկուն, քնքոյշ, փափուկ մարմինը փայլում էր մարմարիոնի սպիտակութեամբ, աչքերը հրաշալի էին, իսկ ձեռքերը աննման,

Սակայն չնայած իւր բոլոր ջանքերին, Իբլիսը չէր կարողանում կեանք ներշնչել իւր ստեղծած արձանին, նրա գեղեցկատեսիլ երեսի գիմագծերը անշարժ էին, իսկ աննման մարմնի մասերը լուռ, մեռած։

Շատ աշխատանք թափեց Իբլիսը, շատ չարչարանք գործ դրեց իւր ստեղծագործութեան շունչ ներշնչելու համար, բայց բոլորը իզուր, նա լուռ էր ու անշարժ։

Բարկութիւնը խեղդում էր Իբլիսին։

Ինչպէ՞ս,—մտածում էր նա,—միթէ ե՛ս ստիպուած պէտք է լինեմ գլուխ խոնարհեցնել Ալլահի առաջ և նրա օգնութիւնը հայցել իմ ստեղծած արձանին կեանք ներշնչելու համար... ո՛չ երբէք, ես ինքս շունչ կը տամ նրան։

Եւ նորից զուր աշխատանք, զուր տանջանք.—հոգից զրկւած չքնաղ արձանը անշարժ ընկած էր գետնի վրայ, կարծես թէ շղթայած, կապւած լինէր այն հողին, որից նա շինւած էր։

Այն ժամանակ Իբլիսը վճռեց խորամանկութեան դիմել։

Նա տեսել էր, որ Ալլահը իր ստեղծած տուարկաններին շունչ էր տալիս փողի միջոցով։

Եւ շարունակ հետևելով նրան, մի անգամ գողացաւ աստուածային փողը և փչեց արձանի վրայ։

Եւ չքնաղ գեղեցկատեսիլ արձանը շունչ առաւ. Նրա հրաշալի աչքերը վառւեցին կեանքի կրակով, դէմքի վրայ, արևի առաւօտեան ճառագայթների պէս փայլեց չքնաղ ժպիտը։ Նա ոտքի կանգնեց և նրա մարմնի բոլոր շարժումները գայթակղեցուցիչ էին, կրքերով ու ցանկութիւններով լի։

Եւ այդ չքնաղ, աննման արարածի առաջ, անխօս գերու պէս խոնարհեցրեց իր գլուխը տգեղ տղամարդը։

Ու նրա վրայ սկսեց տիրապետել քարասիրտ, ինքնասէր կինը, իսկ տղամարդը համբերութեամբ ու սիրով կատարում էր նրա բոլոր հրամանները և տանում անվերջ կապրիզները։ Նա դեռ այնքան բաղդաւոր պէտք է համարէր իրեն, որ սատանայի սև հոգին անցնելով աստուածային փողի միջից, մաքրուել էր։

Ահա այդ պատճառով էլ կնոջ մարմինը սատանայական է, իսկ հոգին Աստուածային։

Փոխադր. Վ. Թում



—Մելքոն ապէր, էս տարի հացը բոլա, դարդներիդ չարայ կլի։

—Հէր օխնած, իմ դարդը խօ հացի կարիքիցը չի, ես ու բալէքս ապրուստի կարօտ խօ չենք—մենք մարթկերանցից ենք կարօտ, մարթկերանցից, մարթկերանց պակասութիւն ենք քաշում. հաց որ չլի կարենք դիմանայ, համա մարթ որ չկայ, էդ ա դժար։

—Մելքոն ապեր, թամամ սրտիցս ես խօսըմ։

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՄ ՆԻՒԹԵՐ

*Նւէր Լէօին*

Պարսկաստանի մէջ—շահը գահնկեց։
Օսմանեան ազգը նոր ծնունդ առաւ։
Հայկական ջարդը նորից բորնկեց։
Արդիւլ Համիդը թռչնապահ դառաւ։

Փողաւորները այցի են գնում։
«Թօլերանս» եկաւ աւելի հարաւ։
Պուրիշկևիչը նոր դաւ է նիւթում։
Թաչատուրովը «յայտնի» մարդ դառաւ։

Կաթողիկոսը հասաւ վեհարան.
Մկներ են պարում էջմիածնի մէջ.
Դատարկ են նոյնպէս դպրոց, պահարան.
Իսկ Սուքիաս արհին լալիս է անվերջ։

«Թիւս վնասակար» «Գործը» դադարեց.
Բանագողեանը հանգիստ շունչ առաւ.
Սպանդար—դայլին նոր ներկ հնարեց։
Սօցիալիստը անայնպարծ դառաւ։

Այս հում նիւթերը նւիրում եմ քեզ,
Առայժմ այսքանն էլ բաւական է.
Բայց իսկութիւնը երբէք չը պատմես,
Որ չասենք Լէօն կուսակցական է։

Լօ-Թի

## ՏՐԱՄԻԱՑՈՒՄ

—Է՛յ, վատման, միթէ կարելի է. այդպէս արագ քշել, կարող է տակը մարդ ընկնել։

—Աւելի լաւ. թող ընկնի։

—Ինչպէ՞ս թէ աւելի լաւ. ձեզ ինչ օգուտ։

—Օգո՜ւտ. օգուտը ո՛չ թէ միմիայն ինձ համար է, այլ ամբողջ Ռուսաստանի։

—Ի՞նչպէս։

—Ահա թէ ինչպէս, վագօնի տակ ընկնողի ծնողները կամ ազգականները, դատ կը բանան մեր վարչութեան դէմ և մի քանի հազար ռուբլի փող կը ստանան։

—Յետոյ մեզ ինչ օգուտ դրանից։

—Եղբայր, միթէ այդքան չէք հասկանում, այն օգուտը կը լինի, որ փոխանակ մեր փողը Բէլգիա գնալու, կը մնայ այստեղ, Ռուսաստանում։

Թօխար

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

*Ախալցխա* ճզմաքի Քյօ.—Ձեր գրածը գուցէ կտպենք, սկզբից ինչքա՞ն էք յուսահատական ենթադրութիւններ անում, իսկ եթէ չտպենք, ինչ կայ նեղանալու։

*Ալեքսանդրապօլ.*—Գ. Ա. Գրում էք որ ծխական դպրոցների ուսուցչական խմբերն արձակեցին։ Երևում է ուրախ էք. մենք էլ ձեզ հետ ուրախ ենք, թէ չխրող ամուսինները կարող

են բաժանել, ինչու վարժապետները չեն կարող հեռանալ դպրոցներից, եթէ այնտեղ իրանց ուզող չկայ։

Զարջոյ.—Այդտեղ մէթէ հոգեկան հիւանդների բուժարան չկայ. Ափսոս հեռու էր. այստեղ կարելի էր բժշկել։

Բացու.—Կլյան Ցակոբ.—Բացի Բաքուից, Ռուսաստանի բոլոր քաղաքներից թղթակցութիւններն ստացւում են բաց փակէթով, կամ բանդերօլով երկու կոպեկանոց մարկա կպցրած։ Տեղեկացէք այդտեղի պօստատնից։ Փակէթի վերայ որոշ պիտի գրած լինի для печати.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

*Պարոն խմբագիր՝*

*Խոնարհաբար խնդրում եմ ձեզ զետեղել սա մի քանի տողերը ձեր յարգելի «Խաթաբալա» թերթում.*

Մի ոմն «Մոծակ» ստորագրութեամբ, իր յօդւածում՝ «Նամակ Գանձակից» յուլիսի 25-ից ս. թ. № 30, գրում է, թէ իբրև ես «քաղաքի կեղտոտութիւնները մաքրող մշակներին, փոխանակ, քաղաքում աշխատեցնելու, իմ այգումն եմ բանեցնում, բացի գործից 3—4—5-ական րուբ. էլ կաշառ վերցնում մշակներից»։

Թողնելով այդ զզւելի, անխիղճ ու անարգար մեղադրանքը իմ հասցէիս, մօտիկ ապագայի լուծման, խնդրում եմ ձեզ պարոն խմբագիր, յայտնէք այդ «Մոծակի» տակ թաքնւած պարոնի իսկական անունն և ազգանունը, որպէսզի ես հնարաւորութիւն ունենամ երեան հանելու արդարութիւնը և իմ շօշափած պատիւը վերականգնելու ընթերցող հասարակութեան առաջ։ *)

Սերոբ-Մելիք-Առստամեանց

*) Տպագրելով վերի նամակը, սրանով, խնդրում ենք մեր աշխատակից պ. «Մոծակին», համաձայն իւրեն խոստման, բացատրութիւն տալ պ. Սերոբ-Մելիք-Առստամեանին «Խաթաբալա»յի № 30-ում գրած իր յօդւածի համար։

Խմբագիր

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կօնսիստորի ծառայող Պետոն նորից իր հրաժարականի խնդիրն է յարուցել։ Սպառնում է կամ հինգ մանէթ ռոճիկը աւելացնել և կամ թոյլ տան իրեն ծառայութիւնը թողնել։

Պետոյի տեղի համար 168 խնդիրներ կան, բոլորն էլ գիրք և կաղ ունեցող մարդիկ։

—

Ջրկինենց եկեղեցու միաբան Սիմէօն քահանայ Արրահամեանի մահը խոր և անհուն ուրախութիւն պատճառեց իր կարգակիցների և տիրացուների շրջանին, նրբան փոխարինելու համար, ամեն մինջոց թոյլատրւում է։

—

Թիֆլիզ են հաւաքւել Կովկասեան բոլոր վայրերից մի քանի հարիւր հայ ուսուցիչ ուսուցչուհիներ, մեծամասնութիւնը դրանցից գրագւում են դասագրքեր կազմելով, տպարանները գները բարձրացրին։ Սատախոսիկան ասում է, որ ամեն մի վարժապետ 18 տարեկայի դասագիրք է կազմում։

—

Մեր դպրոցների ծառաները նոյնպէս պատրաստւում են դասագրքեր կազմել։ Ասում են, որ իրենք ուսուցիչներից գիտութեամբ և պատրաստականութեամբ ոչնչով պակաս չեն։

—

Կովկասը թէև դեռ ազատ է խօլերայի և սիբիր ախտի էպիդեմիայից, բայց գիտակ բժշկական և տեղեակ շրջաններում անձութեամբ սպասում են նրանց գալուն։

—

Մեզ գրում են մեր սեփական թղթակիցները, որ խօլերայի պահանջը օրէցօր աւելանում է մեր ինտելլիգենտ շրջաններում։

—

Էջմիածնի ճեմարանի տեսչութեան համար, իր ծառայութիւնն է առաջարկել ամենապատիւ Տէր-Տեղապահին Բէթղէհեմի հրաշակերտ տիրացու Տիգրանը։

—

«Закавказіэ»-ի խմբագիր իշխ. Գ. Ամիրաջիբին, ինչպէս հաստատ աղբիւրներից լսւում է, քոթակ տալու և հայհոյելու մէջ կատարելագործւելու համար, ուղևորւում է Օդէսսա սօիւզնիկ բէզինիստների մօտ։

—

Թիֆլիսի կօնսիստորիայում խնդրատուներին արգելւում է խնդիրներ գրել տալ, մետրիկական և այլ վկայականներ ստանալու համար. և քանի որ խնդրատուները գլխաւորապէս կանայք են լինում, ուստի կանայք էլ ստիպւած են լինում կարանները մտնել խնդիր գրողներին գտնելու համար։

Գեղեցիկ կարգադրութիւն։

—

Որովհետև շատ տեղերից անդադար գանգատւում էին տիրող ռօթերի և անտանելի շոգերի առթիւ, և որովհետև թէ սատիկանութիւնը, թէ ինտելլիգենցիան, թէ մեր հոգևորականութիւնը և թէ առ հասարակ իշխանութիւնները, մինջոց չէին ձեռք առնում դրա առաջն առնելու համար, ուստի մեր կեդրոնական կուսակցութիւնը կարգադրեց մի միլիոն փութ զովութիւն բացթողնել ներքին շուկաների համար։






—Եղաան, խմ ես պուտնգ մուռնգղ կապել, տեսնում չես ինչ ժամանակներումն ենք ապրում։

—Դէ քմատաղ, ես էլ դրա համար եմ կապել, որ վաղ ժամանակներումն ենք ապրում։


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի և Լ. Շանթի

ԿԱԶՄԱԾ

# ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք

Լոյս տեսան

Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.

Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.

Երկուսն էլ ընդունւած կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։

Տպագրւում են.

Գ. տարի . . . . . 60 կոպ.

Դ. տարի . . . . . 75 կոպ.

Գլխաւոր պահեստներն են հետեւեալ գրախանութները. Թիֆլիսում՝ «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» և Կենտրօնական, Բաքւում՝ Сотрудникъ, Երևանում՝ Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ

(Фото-Цинкографія)

ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ.




МАГАЗИНЪ

**Композиція**

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія

шведскаго композиціон. бѣля.

→Носится не менѣе двухъ лѣтъ!←

Постоянный большой выборъ свѣжаго товара

Воротниковъ, манишекъ и манжетъ.

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենայն Աշխարհում



ԱՆԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամենատաշին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքեղ ֆասոնների և ամենալաւ գործածւող նիւթերից



ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ




1888

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ


Խմբագիր-հրատարակող՝ ԱՌՏ. ԵՐԻՑԵԱՆ Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

# ԹԻՖԼԻՍԻ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ ՏԱՆ ԱՌԱՋ



*Ուր գէշք իցեն, անդ ժողովեսցին արծուիք*

Մեր ուսանողները հէնց որ իմացան, թէ Միրզոյեանը կտակ է թողել, որով ուսանողները կարող են սովորել, օգտւում են իրար և ուսանող ու չուսանող, աղքատ ու հարուստ և աւելի հարուստ, դիմում են Միրզոյեաններից նպաստ խնդրելով։ Իսկ թէ քանիսը 1000 մարդուց իրաւունք ունի նպաստի՝ այդ իրենց հարցնենք։

## ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՈՒՍԱՆՈՂ ՈՐԴԻՆ



*Որդին.*—Սրանք իմ ծնողներն են. գրողը տանի, այս ինչի՞ նման են։

*Ծնողները.*—Սա մեր որդին է. ֆու գրողը տանի, խեղճ լայեղ էլ չէ անում, ափսոս մեր ամագ։



Երբեմն վաճառական, վերջերս աղքատացած Վ. Ոսկանեանը անկարող լինելով տանել զաւակների աղեկտուր «հացենք ուզում» աղաչանքը, մկնդեղ է խառնում կերակրի մէջ և ուտեցնում ու ուտում որպէսզի սովը այլևս չնեղէ իրենց։

Նուխիի հարուստները ինչ էին անում, որ իրեց ընկերոջը գէթ չոր հացով էլ չէին օգնում. ամօթ իրենց։

## ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Գործերը առաջ են գնում։